**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2**

## *ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ /ՏԵՂԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ*

ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան « 01 » փետրվարի 2017թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից և «Լեոն երկրորդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ֆ. Անտոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից՝ հիմք ընդունելով 2016 թվականի մարտի 16-ին կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով՝ Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և սույն Համաձայնագրի N3 հավելվածով՝ 2017թ. սպասարկման ենթակա ավտոճանապարհների ցանկով նախատեսված, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ), համաձայն սույն Համաձայնագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **17 098 800 (Տասնյոթ միլիոն իննսունութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իր հանձնարարությամբ կատարված Աշխատանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N2 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

**3 Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 1 էջից, սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1, N2 և N3 հավելվածները բաղկացած՝ 4 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ք.Իջևան, Սահմանադրության 1, | ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29-ի փ.21, |
| հեռ. 0263-32356 | հեռ. 0266-23337 |
| Իջևանի ՏԳԲ | <Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ> ՓԲԸ «Նոյեմբերյան» մասնաճյուղ |
| Հ/Հ 900371079022, ՀՎՀՀ 07611324 | Հ/Հ 220153330034-000, ՀՎՀՀ 07403208 |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | |

Հավելված N 1
< 01 > < փետրվարի> 2017 թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Աշխատանքի, օբյեկտների անվանումը | Աշխատանքի կատարումը՝ 2017թ. ընթացքում | | | | Ընդամենը՝ /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | |
| Ընդամենը՝ ՅՅ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ, որից | 3854.000 | 4530.000 | 4530.000 | 4184.800 | 17098.800 |
| ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 3854.000 | 0.000 | 0.000 | 1967.200 | 5821.200 |
| ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ | 0.000 | 4530.000 | 4530.000 | 2217.600 | 11277.600 |

*ՊԱՏՎԻՐԱՏՈՒ*
*ՀՀ Տավուշի մարզպետարան*
*ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան Սահմանադրության 1*
*Հ/Հ 900371079022*
*ՀՎՀՀ 07611324*
------------------ *Ա. Դավթյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

*ԿԱՏԱՐՈՂ*
*<<Լեռն երկրորդ>>ՍՊԸ*
*ՀՀ ք. Նոյեմբերյան*
*Նոյեմբերի 29/21*
*Հ/Հ 220153330034-000*
*ՀՎՀՀ 07403208*
------------------ *Ֆ. Անտոնյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

Հավելված N 2
< 01 > < փետրվարի> 2017 թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Աշխատանքի, օբյեկտների անվանումը | Աշխատ պայման ա գրային գինը | Ֆինանսավորման գումարը 2017թ. ընթացքում ըստ ամիսների * հազ. դրամ/ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվ. | փետր. | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ. | նոյեմբ. | դեկտ. | Ընդամենը` /հազ դրամ/ |
| Ընդամենը` ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ, որից` | 17098.800 | 0.000 | 2570.000 | 3854.000 | 5364.000 | 6874.000 | 8384.000 | 9894.000 | 11404.000 | 12914.000 | 14394.000 | 15787.600 | 17098.800 | 17098.800 |
| ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | | 0.000 | 2570.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 3854.000 | 4510.000 | 5821.200 | 5821.200 |
| ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ | | 0.000 | 0.000 | 0.000 | 1510.000 | 3020.000 | 4530.000 | 6040.000 | 7550.000 | 9060.000 | 10540.000 | 11277.600 | 11277.600 | 11277.600 |

*Վճարման գումարները պատկերված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
*ՀՀ Տավուշի մարզպետարան*
*ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան Սահմանադրության 1*
*Հ/Հ 900371079022*
*ՀՎՀՀ 07611324*
*Ս. Դավթյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

**ԿԱՏԱՐՈՂ**
*<<Լոռի երկրորդ>>ՍՊԸ*
*ՀՀ ք. Նոյեմբերյան*
*Նոյեմբերի 29/21*
*Հ/Հ 220153330034-000*
*ՀՎՀՀ 07403208*
*Ֆ. Անտոնյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

07403208

Հավելված N 3
< 01 > < փետրվարի> 2017 թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2 համաձայնագրի

# Ց Ա Ն Կ

## 2017Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ ներառյալ շահույթը և ԱԱՀ 20% | Ընդամենը /հազար դրամ/ ներառյալ շահույթը և ԱԱՀ 20% |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ | | | | | | | |
| S-10-24 /Մ-4/-Գետահովիտ կմ0+000-կմ2+100 | Տեղական II- IV | 2.1 | ՏՎ/I I I / | բավարար | 2.1 | 220. 500 | 463. 050 |
| S-10-25 /Մ-4/-Լուսաձոր կմ0+000-կմ1+500 | Տեղական II- IV | 1.5 | ՏԼ /I/ | բավարար | 1.5 | 220. 500 | 330. 750 |
| S-10-26 /Մ-4/-Լուսահովիտ կմ0+000-կմ5+800 | Տեղական II- IV | 5.8 | ՏԼ /I/ | բավարար | 5.8 | 220. 500 | 1 278. 900 |
| S-10-27 /Մ-4/-Ակնաղբյուր կմ0+000-կմ3+000 | Տեղական II- IV | 3.0 | ՏՎ/I I I / | բավարար | 3.0 | 220. 500 | 661. 500 |
| S-10-28 Մ-16 - Սևքար կմ0+000-կմ2+000 | Տեղական II- IV | 2.0 | ՏԼ /I/ | բավարար | 2.0 | 220. 500 | 441. 000 |
| S-10-29 /Մ-16/-Ն.Ծաղկավան կմ0+000-կմ1+500 | Տեղական II- IV | 1.5 | ՏԲ/I I / | բավարար | 1.5 | 220. 500 | 330. 750 |
| S-10-31 /Մ-4/-Հովք կմ0+000-կմ3+200 | Տեղական II- IV | 3.2 | ՏԲ/I I / | բավարար | 3.2 | 220 .500 | 705. 600 |
| S-10-32 /Մ-4/-Դիտավան կմ0+000-կմ2+000 | Տեղական II- IV | 2.0 | ՏՎ/I I I / | բավարար | 2.0 | 220. 500 | 441. 000 |
| S-10-30 Մ16 - Կիրանց-Աճարկուտ կմ0+000-կմ3+200 | Տեղական II- IV | 3.2 | ՏՎ/I I I / | բավարար | 3.2 | 220. 500 | 705. 600 |
| S-10-22 Հ36 – Գանձաքար կմ0+000-կմ2+100 | Տեղական II- IV | 2.1 | ՏԼ /I/ | բավարար | 2.1 | 220. 500 | 463. 050 |
| **Ընդամենը** | | **26.4** | ՏՎ/I I I / | բավարար | **26.4** | | **5 821. 200** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
| S-10-26 /Մ-4/-Լուսահովիտ կմ0+000-կմ5+500 | Տեղական II- IV | 5.5 | SL /I/ | միջին | 5.5 | 693. 000 | 3 811. 500 |
| S-10-28 Մ-16 - Սևքար կմ0+000-կմ2+000 | Տեղական II- IV | 1.5 | SL /I/ | միջին | 1.5 | 693. 000 | 1 039. 500 |
| S-10-25 /Մ-4/-Լուսաձոր կմ0+000-կմ1+500 | Տեղական II- IV | 1.5 | SL /I/ | միջին | 1.5 | 693. 000 | 1 039. 500 |
| S-10-29 /Մ-16/-Ն.Ծաղկավան կմ0+000-կմ1+500 | Տեղական II- IV | 1.5 | SԲ/I I / | միջին | 1.5 | 817. 680 | 1 226. 520 |
| S-10-31 /Մ-4/-Հովք կմ0+000-կմ3+200 | Տեղական II- IV | 3.2 | SԲ/I I / | բավարար | 3.2 | 845. 400 | 2 705. 280 |
| S-10-22 Հ36 – Գանձաքար կմ0+000-կմ2+100 | Տեղական II- IV | 2.1 | SL /I/ | միջին | 2.1 | 693. 000 | 1 455. 300 |
| Ընդամենը | | 15.3 | | | 15.3 | | 11 277. 600 |
| Ընդամենը՝ Իջևանի տարածաշրջանով | | | | | | | 17 098. 800 |

***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ***
*ՀՀ Տավուշի մարզպետարան*
*ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան Սահմանադրության 1*
*Հ/Հ 900371079022*
*ՀՎՀՀ 07611324*
------------------------ *Ս. Դավթյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

***ԿԱՏԱՐՈՂ***
*<<Լեռն երկրորդ>>ՍՊԸ*
*ՀՀ ք. Նոյեմբերյան*
*Նոյեմբերի 29/21*
*Հ/Հ* 220153330034-000
*ՀՎՀՀ 07403208*
------------------------ *Ֆ. Անտոնյան*
*/ստորագրություն/*
*Կ.Տ*

07403208

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2

*(պայմանագրի կատարման ապահովում)*

ք. Իջևան « 01 » փետրվարի 2017թ.

<<Լևոն երկրորդ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ֆ. Անտոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Տավուշի մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ <Լևոն երկրորդ> ՍՊԸ

Ընկերության հասցեն՝ ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29-ի փ.21

Ընկերության բանկի անվանումը՝ <Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ> ՓԲԸ, «Նոյեմբերյան» մասնաճյուղ

Ընկերության Հ/Հ՝ 220153330034-000

Ընկերության ՀՎՀՀ՝ 07403208

տնօրեն՝ Ֆ. Անտոնյան

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝

(ստորագրություն)

Կ.Տ

1.

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <Լևոն երկրորդ> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ <Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ> ՓԲԸ , «Նոյեմբերյան» մասնաճյուղ

5. Վճարողի հաշվի համարը՝ 220153330034-000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 07403208

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ Տավուշի մարզպետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 07611324

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ֆին. նախ. գործ. Վարչ.

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/900371079022

12.Գումարը թվերով և բառերով՝ 1 710 000.0 / մեկ միլիոն յոթ հարյուր տասը հազար/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ **N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄ-16/2-1-2**

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝— էջ

| 19.ա. Շահառուի ստորագրությունները | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝ |
|---|---|
| /________________/ | /________________/ |
| /________________/ | /________________/ |
| 19.բ. Կ.Տ. | 07403208<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից | Կատարված է վճարողի բանկի կողմից |
| 20.ա. /________________/ | 21.ա. /________________/ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| 20.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| "___" ___ 20___ թ. | 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |